

« ԱՐԱՐԱՏԻ ՌԵՎՈԼՈՒՑԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂՄԱՆԱԿԱՐԱՎՈՐ ԱՐԱՐԱՏ »

« Արարատին հղուաց մերոց »

Արարատի բարձուակէն.
Հայ դիւցազներն հըռչակող
Գոռ շնփորներ բիւրաւոր
Կ'արձագանեն մարտագոշ:
Կը ծաւանին Տըղմուտի
Կանաչագեղ ափերուն՝
Զերդ բարձիսում սրտերուն՝
Դրօշակներ ծալ ի ծալ,
Տաղաւարաց սրբուն մէջ
Թող հրավալու բորբաթ
Սուրբ հաւատիք սըխն անձէջ
Լուսաւորչայ կըրպին:
Վաճաններու շառաչով
Կ'ուխտեն հայոց զօրքը քաջ
« Մեզ օգնութիւն դռն սուրբ խաչ
Տուր մեզ յաւէտ փառքն յաղթող »:

Փ

Զաստուածներու բազիններուն
Վերջին բոցերն առկայժ
Պաշտամնակի զոները գեռ կը լափեն:
Կ'երգեն քուրմենը աստուածամարտ կըրօնքի
— Փառք հեթանոս կըրակին: —
Հայ ախոյանը կ'աղօթէ տիեզերքի Արարձին:

Փ

Կը զոռան ամպեր Յասեաց կասարէն
Կը թափեն անէծք շանթերն ահարկու
Ու պատուանդանները շաստուածներու
Երկնային հուրեն կը կորգն անենաւ:
Հըգօր Վարդանայ սուրն ահեղասաստ
Նազուրեցին անունը կ'երգէր,
Ստեղծուած էր ան աշէն Արարձին
Որ ոչընչացնէ վերջինքն հեթանոս:
Մինչ իւր հաւատիքն ուրացողի
Տաժանակիր մահուան դէմ՝
Հայը թուրով և թոյնով
Գեռ մուեզնած կը կառի,

Երկինք ի տես կը ցընծայ,
Կ'երգէ երկիրս. Յաղթութիւն:

Փ

Ո՞չ Հայաստան չքնաղ սիրոյ հանգըրուան
Գո զիւցազնց դամբանին մօս
Սուրբ ծոցիդ մէջ արդ կը հանզէին
Մեր սիրասունք սըրուակից:
Երբ ողջակէզ անմահութեան
Արիւններու վերջալոյսի խորհութիւն:
Անոնց աղօթքը վերամբարձ
Էր նախերգանք վերածնունդի:
Տես պորակներով լի և զուարթ
Պըլպուներով սիրերգու:
Կը կանաչին յուռթի ափերն Արափսի
Կը զալարուին ուոր-մոլոր
Դաշտերուդ մէջ ու կիրճերէդ ամենի
Անեն Եփրատն ու Տիգրիս
Հին փառքերու խոյանքով:
Պարտէզներուդ մէջ երփներանգ
Կը բողբոշին չուշան և վարդ մանուշակ
Անոնց հուրը մեր քոյրերուն խոչտանգուած
Հափսիթեանց երջն է անուշ կուսական:

Փ

Մինչ աստղազարդ գիշերին
Հորիզոնէն կը բարձրանայ
Պահծառ լուսնակն եթերին մէջ
Լուսաւորել շիրիմին Հայոց,
Իր շողերուն տակ կը լըսուին՝
Լըսութեան մէջ խալազին
Անդըրշիթեան հոգիններու մըրմունչներ
Ու կը նուազն « Փառք ի բարձունս Աստուծոյ »:
Եւ տաճարաց զըմբէթներէն սրբազն
Կը բարձրանան օրներգութիւնք Վարդանայ,
Կը զօղանչէն աւետումի զանգակներ՝
« Ազատութիւն եղբարց մերոց » հայկագեան:

Մ. Խաչազնեան